ԵՐԵՎԱՆԻ
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ
ԱՅԳԻ

«ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՎՐԱՑՅԱՆԻՆ
/ հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակ թաղ. 16/2 /

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/ 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված N ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-21/2 Պահնորդական ծառայությունների մատուցման գնման պայմանագրի մասնակի միակողմանի լուծման վերաբերյալ /

Հարգելի պարոն Վրացյան,

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի և «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված N ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-21/2 Պահնորդական ծառայությունների մատուցման գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ շրջանակներում՝ «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ն իր ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ, մասնավորապես՝ «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի կողմից էականորեն խախտվել է Պայմանագիրը, այն է՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N1 Հավելվածով սահմանված պահանջներին, ինչը հիմք է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար՝ համաձայն Պայմանագրի 2.1.3. և 7.9 կետերի: Պայմանագրի լուծման անհրաժեշտությունը բխում է ներքոշարադրյալ իրավիճակներից.

1. «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի աշխատողները պատշաճ չի կատարվել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված տրանսպորտային միջոցների ելք ու մուտքի հաշվառման մատյանի լրացման պահանջը, որում պետք է լրացվեին Կենդանաբանական այգու տարածք ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցների ելք ու մուտքը, շարժը: Այգու տարածք ելք ու մուտք են ունենում տրանսպորտային միջոցներ, որոնց վերաբերյալ տեղեկությունները լրացված չեն վերոգրյալ հաշվառման մատյանում, ինչով խախտվել են Պայմանագրով կազմակերպության ստանձնած պարտավորությունները: Ինչպես նաև անվտանգության աշխատողը չի ստորագրել համապատասխան տեխնիկական միջոցների ստուգման վերաբերյալ փաստաթուղթը, չի իրականացել հերթափոխի պատշաճ հանձնում-ընդունումը, չի ստուգվել հենակետի տեսադիտման սարքի կարգավիճակը:

2. Սույն թվականի հոկտեմբերի 10-ի լույս հոկտեմբերի 11-ի ժամը 01:00-01:30-ի շրջակայքում Կենդանաբանական այգու տարածքից «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի անվտանգության աշխատողները մեկ այլ երրորդ անձի միջոցով Կենդանաբանական այգու տարածքից հանել են արկղով խնձոր, այն

տեղադրել մուտքի մոտ սպասող անհայտ տրանսպորտային միջոցի մեջ՝ անհասկանալի պայմաններում և անհասկանալի պատճառներով, որի մասին գրառումները կրկին չեն լրացվել հաշվառման մատյանում:

3. «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի անվտանգության աշխատողը ծառայության ընթացքում օգտագործել է ոգելից խմիչք և բանավոր ընդունել զանցանքը: Մեկ այլ աշխատող թերացել է և պատշաճ չի մատուցել սահմանված անվտանգության ապահավումը, մասնավորապես՝ հերթափոխի ընթացքում իր պահակակետում քնել է ոչ իրեն հատկացված հանգստի ժամին, որպիսի իրավիճակը կրկնվող բնույթ ունի բոլոր աշխատողների կողմից, ինչը Պայմանագրի պահանջների կոպիտ խախտում է:

4. Սույն թվականի հոկտեմբերի 20-ին «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ում անցկացվել է «Երազանքի երեկո» միջոցառումը հաշմանդամություն և քրոնիկ հիվանդություններ ունեցող, սոցիալապես անապահով երեխաների և նրանց ընտանիքների համար: «Երազանքի երեկո»-ի ընթացքում Կենդանաբանական այգին փակ է եղել սովորական այցելությունների համար, իսկ հրավիրյալների առջև դռները բացվել են որպես հատուկ կարևորության հյուրերի: Միջոցառմանը ներս չեն թողել հրավիրյալ անձի և միևնույն ժամանակ ներս են թողել չհրավիրված անձի, ում այցը լարվածություն է առաջացրել աշխատողների մոտ, քանի որ մոտեցել է որոշ աշխատողների և ավելորդ խոսակցություններ սկսել, իսկ անվտանգության աշխատողները ի վիճակի չեն եղել կարգի հրավիրել վերջինիս: Նույն օրը Կենդանաբանական այգու տարածքից գրանցվել են այլ խախտումներ, որոնց վերաբերյալ անվտանգության աշխատողը բացատրել է, որ իր ուշադրությունը շեղել են այցելուներն ու կամավորները, ինչն անընդունելի պատասխան է անվտանգության ծառայության աշխատողի կողմից:

5. Սույն թվականի հոկտեմբերի 20-ի լույս հոկտեմբերի 21-ի գիշերը ժամը 01:02-ի շրջակայքում անվտանգության աշխատողը բավականին երկար ժամանակ փորձել է տեղաշարժել իր հենակետում տեղադրված անվտանգության տեսախցիկը՝ ձեռքերով և այլ տեխնիկական միջոցներով փորձելով այն թեքել այլ ուղղությամբ, դրանով խախտելով իր կողմից անվտանգության պատշաճ իրականացումը և միաժամանակ վնասելով տվյալ տեսախցիկը և Կենդանաբանական այգուն պատճառելով նյութական վնաս՝ 15,000 - 20,000 / տասնհինգ հազարից քսան հազար/ ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալ նկարագրված իրավիճակները հիմնավոր փաստում են, որ «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի կողմից էականորեն և բազմակի խախտվել է Պայմանագիրը, այն է՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N1 հավելվածով ամրագրված տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և բավարար հիմք է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու համար՝ համաձայն Պայմանագրի 2.1.3. կետի:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի և «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված N ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-21/2 Պահնորդական ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 2.1.3 կետը՝ *2.1.3. պայմանագրի 2.1.3 կետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատուցված ծառայությունը չի*

համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) պայամանագրի 2.4.2. կետի պահանջների չկատարումը, գ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, և պայմանագրի 7.9-րդ կետը՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը միակողմանի լուծում է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի և «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված N ԵՔԿԱ-ԳՀԾՁԲ-21/2 Պահնորդական ծառայությունների մատուցման գնման պայմանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Տեղեկացնում ենք նաև, որ «ՊԱՀԱՊԱՆ 1» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժերը և տուգանքները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կատարողից կգանձվեն որակավորման և պայմանագրի ապահովումները:

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝ Արևիկ Մկրտչյան _____

28 հոկտեմբերի, 2021թ.